



«Այբ կրթական հանգույց» հիմնադրամ
Երևան 0052, Թբիլիսյան խճ. 11/11
Հեռ.՝ +374 60 500 456, +374 94 546 498
welcome@aybschool.am
www.aybschool.am

«Այբ» դպրոցի գործառնական տնօրեն

Պաշտոնի ընդհանուր նկարագրություն

Գործառնական տնօրենը դպրոցի ավագ ղեկավարության թիմի անդամ է: Գործառնական տնօրենը հիմնականում հաշվետու է ուսանողների և աշխատողների անվտանգության, ֆինանսական ռեսուրսների արդյունավետ կառավարման, վարչարարության, դպրոցի բնականոն աշխատանքի ապահովման, սպասարկող/օժանդակ ծառայությունների մատուցման, դպրոցի տարածքների և ՏՏ ենթակառուցվածքների պատշաճ գործունեության համար: Գործառնական տնօրենը պետք է ապահովի բոլոր գործառնական գործողությունների համապատասխանությունն օրենսդրական պահանջներին և ներքին կանոնակարգերին:

Գործառնական տնօրենը «Այբ»-ի առաքելության կրողն է և խորապես ներգրավված է դրա իրականացման մեջ, իր աշխատանքով նվիրված է «Այբ»-ի նպատակներին և հոգաբարձության խորհրդի հաստատած զարգացման, ռազմավարական կամ այլ ծրագրերի իրականացմանը:

Գործառնական տնօրենը իր գործառնական կատարելիս համագործակցում է ավագ ղեկավարության թիմի մյուս անդամների, ինչպես նաև դպրոցում և դպրոցից դուրս այլ անձանց հետ՝ դպրոցի արդյունավետ գործունեությունը ապահովելու և ռազմավարական նպատակներին հասնելու համար:

Գործառնական տնօրենի հիմնական նպատակները և պարտականությունները

- Ստորաբաժանման կառավարում
- Անձնական առաջնորդություն
- Կազմակերպչական առաջնորդություն
- Դպրոցի ռեսուրսների ընդհանուր կառավարում
- Պլանավորում և բյուջետավորում
- Այլ պարտականություններ՝ որպես ավագ ղեկավարների թիմի անդամ
- Գործադիր տնօրենի կամ հոգաբարձուների խորհրդի հանձնարարած այլ գործառնական

Պահանջվող հմտություններ

- Կառավարման կամ ադմինիստրատիվ ոլորտի կրթությունը կամ որակավորումը ցանկալի է
- Կառավարման 5 և ավելի տարիների փորձ
- ՀՀ օրենսդրության՝ ֆինանսատնտեսական գործունեության ոլորտին առնչվող հիմնական դրույթների լավ իմացություն
- Հայերենի, անգլերենի և ռուսերենի իմացություն
- Տեղեկատվական տեխնոլոգիաների վերաբերյալ կիրառական գիտելիքներ, տեղեկացվածություն, թե ինչպես կարելի է տեղեկատվական տեխնոլոգիաները կիրառել աշխատանքի արդյունավետության մեծացման մեջ
- Որոշումներ կայացնելու և պատասխանատվություն ստանձնելու ունակություն
- Ժամանակի կառավարման հմտություններ
- Զննարկատական և կառուցողական մտածողություն
- Հաշվետվություններ և զեկույցներ կազմելու հմտություններ

- Խնդիրների բացահայտման, ներկայացման հմտություններ
- Հուզական ինտելեկտ
- Ստրեսակայունություն և բարդ իրավիճակներում կողմնորոշվելու ունակություն
- Թիմ ղեկավարելու հմտություններ
- Թիմում արդյունավետ աշխատելու հմտություններ
- Հաղորդակցության հմտություններ

Դիմելու կարգը

Ներկայացված պահանջներին համապատասխանող թեկնածուներին խնդրում ենք ուղարկել ինքնակենսագրական vacancy@aybschool.am հասցեին: Նաև խնդրում ենք նամակի թեմայի (subject) դաշտում պարտադիր նշել՝ Operations director անուն-ազգանուն:

Նախնական ընտրություն անցած թեկնածուները կիրավիրվեն հարցազրույցի:

Դիմումների ընդունման վերջնաժամկետն է 10 հոկտեմբերի 2021 թ.: